

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

« 20 » հունվարի 2017թ.

գ. Շահումյանի թ/Ֆ

Տեղի ունեցավ ՀՀ Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքի ընդհանուր ժողովը՝ մասնակցությամբ համայնքի բնակիչների, համայնքի ավագանու անդամների, Շահումյանի թ/Ֆ համայնքապետարանի աշխատակիցների:

Ժողովին մասնակցում էր ՀՀ Արմավիրի մարզապետարանի աշխատակազմի ղեկավար Փառանձեմ Կարապետյանը:

Նիստը նախագահում էր Շահումյանի թ/Ֆ համայնքի ղեկավար Արթուր Յայլոյանը, արձանագրում Շահումյանի թ/Ֆ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլյա Ղասաբյանը:

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Օրակարգի հաստատում – Ջեկուցող՝ Արթուր Յայլոյան
2. Հաշվետվություն ՀՀ Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների մասին – Ջեկուցող՝ Արթուր Յայլոյան
3. Համայնքի հինմախնդիրները

### ԶԵԿՈՒՑՈՒՄ

ՀՀ Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքի ղեկավարի 2016թ. ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

20.01.2016

Հարգելի համայնքի բնակիչներ և հյուրեր.

ՀՀ Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքապետարանը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով՝ ձեր ուշադրությանն է ցանկանում ներկայացնել հաշվետու տարվա ընթացքում իրականացված աշխատանքներն ըստ առանձին բնագավառների:

Համայնքն ունի 293.7 հա հողատարածք, որից 214.06 հա գյուղատնտեսական նշանակության են: Բնակչության թիվը համայնքում կազմում է 1221 մարդ, տնտեսությունների քանակը՝ 216: Հաշվետու տարում ծնվել են 10 երեխաներ:

2016 թվականի հունիս ամսին համայնքի ղեկավարի կողմից կազմվել, համայնքի ավագանու կողմից հաստատվել և ՀՀ ԿԱԱԳԿ պետական կոմիտեի կողմից հաստատման է ներկայացվել համայնքի 2016 թվականի հողային հաշվեկշիռը: Ինչպես ամեն տարի, համայնքապետարանը կազմակերպել է և Ազգային վիճակագրական ծառայության Վաղարշապատի տարածքային բաժին է ներկայացրել աշխատակազմի միջոցով իրականացված անասնազխաքանակի և

ցանքատարածությունների հաշվառումը, յուրաքանչյուր ամսվա ստացած բերքի հաշվառման ցուցանիշները, գարնանացան և աշնանացան ցանքատարածությունների բերքատվության ամսական արդյունքները:

### 1. Սոցիալ-տնտեսական բնագավառ

2016 թվականի ընթացքում համայնքապետարանի աշխատակազմի կողմից կատարվել են որոշակի աշխատանքներ՝ ի նպաստ համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման: 2016 թվականի ընթացքում համայնքի ավագանու նիստերի ընթացքում համայնքի ղեկավարի ներկայացմամբ կազմակերպվել են համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին ֆինանսական օգնություն ցուցաբերելու աշխատանքներ: Այս տարվա ընթացքում Շահումյանի թ/ֆ համայնքի 42 անապահով ընտանիքների տրվել է դրամական օգնություն, որը ծառայել է նաև ֆինանսապես անապահով ընտանիքներին հողի հարկի ապառքների մուծման, ինչպես նաև այլ կարևոր հիմնախնդիրների լուծման համար: Համայնքի բյուջեից ֆինանսական օգնություն է տրամադրվել նաև համայնքի այն 6 բնակիչերին, ովքեր 2016 թվականի ապրիլ ամսին տեղի ունեցեաժ պատերազմի ժամանակ ընդգրվեցին կամավորների շարքում և մեկնեցին Արցախ՝ կանգնելու հայ զինվորի կողքին: Օրենքով սահմանված կարգով զիջվել է համայնքի 4 անապահով բնակչի ավտոմեքենաների գույքահարկը:

Դրամական օգնությունը տրվելիս և ավտոմեքենաների գույքահարկը զիջելիս հաշվի են առնվել համայնքի բնակիչների սոցիալական վիճակը, համայնքի ղեկավարին ուղղված նրանց դիմումները, որոնք բոլորն էլ քննության են առնվել ավագանու անցկացրած նիստերում: Սոցիալական օգնության շրջանակներում այս տարի համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի ավագանու նիստում բյուջեից գումար է հատկացվել Շահումյանի միջնակարգ դպրոցին՝ որպես Շահումյանի թ/ֆ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճար:

Համայնքում մեծ ուշադրություն է հատկացվում երիտասարդներին, նրանց համար հետաքրքիր միջոցառումների կազմակերպմանը: Փետրվար ամսին Տեառնընդառաջի տոնի առթիվ կազմակերպվել է միջոցառում, որի ժամանակ համայնքի նորաստեղծ ընտանիքներին բաժանվել են նվերներ՝ ոսկյա մատանիների տեսքով: Ապրիլ ամսին կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված Մայրության և գեղեցկության տոնին: Մայիսի 9-ին համայնքի բնակչության համար նույնպես միջոցառում է կազմակերպվել: Ամանորի առթիվ համայնքի 1-11 տարեկան երեխաներին նույնպես հատկացվել են նվերներ:

### 2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

2016 թվականի ընթացքում համայնքում պարբերաբար իրականացվել են աղբահանության աշխատանքներ:

Նաև սիստեմատիկ իրականացվել է փողոցների լուսավորության աշխատանքը:

Մասամբ վերանորոգվել են նաև գյուղամիջյան ճանապարհները: Իրականացվել են համայնքի ճանապարհների փոսալցման աշխատանքներ:

### 3. Պաշտպանության բնագավառ

Աջակցել ենք նաև էջմիածնի զինվորական կոմիսարիատի գործունեությանը՝ տրամադրելով հնարավոր բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթերը համայնքում զորակոչին ենթակա անձանց վերաբերյալ:

### 4. Ֆինանսների բնագավառ

Հաշվետու՝ 2016 թվականի ընթացքում օրենքով սահմանված կարգով Շահումյանի թ/Ֆ համայնքի համայնքապետարանի աշխատակիցների կողմից կազմակերպվել են նաև հողի հարկի, գույքահարկի հավաքագրման և վերահսկման աշխատանքներ: Հողի հարկը տարեկան պլանի համաձայն գանձվել է 102.4 %, գույքահարկը՝ շենքերի- շինություններինը՝ 103.3 %, փոխադրամիջոցներինը՝ 138.7 %:

Համայնքի բյուջեի եկամուտներից սեփական եկամուտների կատարողականը կազմում է 140.2 %, ոչ հարկային եկամուտներինը՝ 272.0%:

Շահումյանի թ/Ֆ համայնքապետարանը բնակիչների հետ մշտապես գտնվում է անմիջական շփման մեջ՝ ուշադրություն դարձնելով վերջիններիս բազմաբնույթ խնդիրների լուծման համար դրված ցանկացած առաջարկություն: Բնակիչներից յուրաքանչյուր ոք, դիմելով համայնքապետարան, բոլոր հարցերի համար ստացել է սպառիչ պատասխաններ: Շուրջ 250 բնակիչներ հաշվետու տարվա ընթացքում ստացել են բազմաբնույթ բովանդակությամբ տեղեկանքներ, շենք-շինությունների կադաստրային խնդիրներին առնչվող քաղվածքներ և այլ գրություններ՝ տարբեր բնագավառներին վերաբերող:

2016 թվականի ընթացքում Շահումյանի թ/Ֆ համայնքապետարան տարբեր հիմնարկություններից մուտքագրվել են շուրջ 200 պաշտոնական բազմաբնույթ գրություններ, որոնք պատասխանվել են ըստ անհրաժեշտության:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ենք ուղարկել համայնքի բյուջեի փոփոխությունները, համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, տեղական տուրքերը, համայնքի բյուջեն, համայնքի ղեկավարի քառամյա ծրագիրը և այլ իրավական ակտեր հաստատող որոշումների փաթեթները:

Ցանկացած նորամուծություն օրենքի բնագավառում, որը վերաբերում է համայնքի բնակիչների առջև դրված հիմնախնդիրների լուծմանը, հողի հարկի և գույքահարկի, տեղական տուրքերի մուծմանը, ինչպես նաև այլ կարևոր հարցերի, բնակիչներին տեղեկացրել են Շահումյանի թ/Ֆ համայնքապետարանի աշխատակիցները:

Հաշվի առնելով այս ամենը՝

համայնքի ղեկավարությունն արածը չի համարում բարձր ցուցանիշ և դրանով չի բավարարվելու:  
Համայնքի գարգացմանն ուղղված աշխատանքները միշտ ընթացքի մեջ են և շարունակական:

Շահունյանի թ/Ֆ համայնքի ղեկավար



Ա. Յայլոյան

## ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Համայնքի համար առաջնահերթ լուծման խնդիր է հանդիսանում գազաֆիկացման հարցը: Համայնքի մոտ 30 տնտեսություն գազաֆիկացվել է Շահումյան գյուղի գազի բաժանարար կետից: Որպեսզի Շահումյանի թ/ֆ համայնքը գազաֆիկացվի, առաջին հերթին համայնքին անհրաժեշտ է գազի նոր բաժանարար կետ, որը կապահովի համայնքի մնացած բնակիչների տները գազաֆիկացնելու: Սա շատ տարողունակ և գումար պահանջող խնդիր է, որի լուծման համար խնդրվում է ՀՀ Արմավիրի մարզպետարանի աջակցությունը:
2. Առաջնահերթ հիմնախնդիր է նաև համայնքի ջրահեռացման համակարգի վերանորոգման հարցը:
3. Մեզ համար կարևոր խնդիր է հանդիսանում նաև համայնքում մանկապարտեզի բացակայությունը:
4. Հիմնախնդիր է նաև համայնքի կենտրոնական ճանապարհի ասֆալտապատման աշխատանքները:

Շահումյանի թ/ֆ համայնքի ղեկավար՝



Ա. Յայլոյան